

10494



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարարի
պարտականությունները կատարող
Արամ Մեյմարյան



Armenian signature

«23» 09 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 197 - 24

Նախաձեռնող՝

«Քոնսեկոարդ» ՍՊԸ
ք. Երևան, Սեբաստիայի փողոց 31/2

Գործունեությունը՝

Ելփինի ջրամբարի կառուցում
Վայոց ձորի մարզ

Առդիր՝ 8 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 197 - 24

«23» սեպտեմբեր 2024թ.

Վայոց ձորի մարզի Արենի համայնքում Ելփինի ջրամբարի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Քոնսեկուարդ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագիծ
Գործունեության տեսակ	«Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, Ելփին բնակավայր

Ներածական մաս. «Քոնսեկուարդ» ՍՊ ընկերության /այսուհետ՝ Ընկերություն/ կողմից փորձաքննության ներկայացված նախագծային փաթեթով նախատեսում է Վայոց ձորի մարզի Արենի համայնքի Ելփին բնակավայրի վարչական տարածքում կառուցել Ելփինի ջրամբարը: Ներկայացվող ծրագրի պատվիրատուն ջրային կոմիտեն է, որը ֆինանսավորվում է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի /ՎԶԵԲ/-ի կողմից:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի՝ 4-րդ մասի 3-րդ կետի ա ենթակետի նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ: Նախատեսվող գործունեության համար հիմք է հանդիսացել պատվիրատուի հայտը, Վայոց ձորի մարզի Արենի համայնքի ղեկավարի կողմից 30/03/2023թ-ին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

Նկարագրական մաս. ՀՀ Կառավարությանը ԵՄ աջակցության շրջանակներում «Վերականգնում, դիմակայունություն և բարեփոխում. Արևելյան գործընկերության առաջնահերթությունները 2020թ-ից հետո» նախաձեռնության «Լրացուցիչ «Բ» նախաձեռնության» շրջանակներում նախատեսվում է՝ կառուցել 17 ջրամբարներ: Ծրագրի իրականացման արդյունքում ոռոգման համակարգերը մեխանիկականից կփոխարինվեն ինքնահոսի՝ ինչը կնպաստի 1 մ³ ոռոգման ջրի ինքնարժեքի զգալի նվազեցմանը, որն իր դրական ազդեցությունը կունենա գյուղատնտեսական արտադրության վրա: Ելփինի ջրամբարը, նախատեսվում է կառուցել Վայոց ձորի մարզի Արենի համայնքի Ելփին բնակավայրի վարչական տարածքում, Ելփին բնակավայրից 2600 մետր հյուսիս-արևելք, Արփա գետի աջափնյա վտակ Ելփին գետի վրա՝ Ելփին և Չիվա բնակավայրերից 300հա գյուղատնտեսական հողատեսքերը ոռոգման ջրով ապահովելու նպատակով:



Ներկայացվող ծրագիրն իրականացվում է Կառավարության քաղաքականության և որոշումների հիման վրա, ուստի քննարկվել են ջրամբարի ցուցանիշների և կառուցման եղանակների տարբերակները: Ինչպես վերը նշվել է՝ Ելփինի ջրամբարը նախատեսվում է կառուցել Վայոց ձորի մարզի, Եղեգնաձորի տարածաշրջանի Ելփին համայնքի վարչական տարածքում, Արփա գետի աջափնյա վտակ Ելփին գետի վրա՝ 1650-1700 բացարձակ նիշերի սահմաններում: Ջրամբարը ծառայելու է գետի հեղեղային ելքերը կուտակելու և սակավաջուր ամիսներին Վայոց ձորի մարզի Ելփին և Զիվա համայնքների 300հա գյուղատնտեսական հողատարածքների կայուն ոռոգումն իրականացնելու համար: Ջրամբարի հիմնական հիդրոտեխնիկական կառույցը՝ պատվարն է: Դիտարկվել է պատվարի կառուցման երկու տարբերակ՝

- քարահողային պատվար (կոպճա-ճալաքարային բնահողից), կենտրոնական ավազակավե միջուկով:
- քարահողային պատվար ավազակավե էկրանով:

Երկու տարբերակների համար կազմվել է նախնական խոշորաված նախահաշիվ: 1-ին տարբերակի դեպքում ջրահամակարգի կառուցման շինմոնտաժային աշխատանքների նախահաշվային արժեքը կազմում է մոտ 2,968 մլրդ ՀՀ դրամ, իսկ 2-րդ դեպքում՝ մոտ 3,091 մլրդ ՀՀ դրամ: Յուրաքանչյուր տարբերակի համար կատարվել են տնտեսական նպատակահարմարության հաշվարկներ և ստացված ցուցիչների ամփոփման արդյունքում որպես նախագծային ընտրվել է 1-ին տարբերակը:

Ջրամբարի լրիվ ծավալը 930 հազ մ³ է, օգտակար ծավալը՝ 810 հազ մ³, մեռյալ ծավալը՝ 120 հազ մ³, պատվարի բարձրությունը 36 մ: Ելփինի ջրամբարի, պատվարի և նրա օժանդակ կառուցվածքների տակ ընկնում է 14.7 հա հողատարածք, որից ջրամբարի բոլոր հիդրոտեխնիկական կառույցների տակ՝ 8.5 հա:

Ջրամբարի ջրածածկման տարածքի կորդինատները՝ ARM WGS-84 կորդինատային համակարգով հետևյալն է՝

Հ/Հ	X [մ]	Y [մ]
1	4410149.3995	8511073.3926
2	4410290.9629	8510999.3030
3	4410293.2190	8511003.3632
4	4410364.5390	8511175.3409
5	4410427.5964	8511171.5827
6	4410425.7712	8511328.6592
7	4410518.0218	8511550.6274
8	4410511.0280	8511554.7917
9	4410447.9885	8511506.9316
10	4410353.4352	8511361.2647
11	4410278.8222	8511299.2016
12	4410149.5337	8511188.6619
13	4410213.8124	8511204.0691
14	4410185.4731	8511147.4916

Նախատեսվող ջրամբարի տարածքը գտնվում է բնական վիճակում, որոշ տարածքներ օգտագործվել են որպես բնական արոտավայրեր: Տարածքը հիմնականում քարքարոտ է, ճալքավոր: Գեոմորֆոլոգիական տեսանկյունից հետազոտվող տեղամասը գրառեցնում է Քարկատարի լեռների հարավ-արևմտյան լանջերը: Շրջանի ողջ տարածքը բնութագրվում է



որպես տիպիկ լեռնային շրջան՝ կտրտված ռելիեֆով: Ռելիեֆը ձորակային է, հատված է Ելփին գետի գետային ցանցով և ժամանակավոր ջրահոսքերով, ունի դեպի հարավ-արևմուտք կողմնորոշված ընդհանուր թեքություն: Տարածքում լայն տարածում ունեն պլիոցենի գոյացումները: Տեկտոնիկայի առումով Ելփինի ջրամբարի շրջանը գտնվում է ծալքավոր գոտում, որը ներկայացված է թույլ տեղախախտված հրաբխածին գոյացումներով, ջրամբարը գտնվելու այդ հրաբխածնային ստվարաշերտում:

Մթնոլորտային տեղումները և Ելփին գետի ջրերը, փուխր բեկորային և ճալաքարակոպճային գոյացումների միջոցով ներթափանցելով առաջացնում են միջմակերեսային ջրային հորիզոն: Հիմնական ստորգետնյա ջրերի մեծ մասը կուտակվում է միջին պալեոգենի հրաբխային ապարներով ներկայացված՝ տարածաշրջանային ջրամերժ շերտի վերևում:

Կլիման պատվարի հատվածում չափավոր է, երկարատև տաք ամառներով և ցուրտ ձմեռներով: Օդի միջին տարեկան ջերմաստիճանը $12,3^{\circ}\text{C}$ է, հունվարին՝ $-2,6^{\circ}\text{C}$, օգոստոսին՝ $25,9^{\circ}\text{C}$: Օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը 59 է, տեղումների միջին տարեկան քանակությունը 385մմ, որը հիմնականում թափվում է ապրիլ-հոկտեմբեր ամիսներին:

Ջրամբարի տեղամասում հիդրոլոգիական հաշվարկների կատարման համար որպես բազային տվյալներ վերցվել են Գլաձոր գետի վերնաշեն դիտակետի տվյալները, քանի որ վերջինս ունի շուրջ 58 տարվա դիտարկումների շարք, ինչպես նաև Ելփին գետի Ելփին դիտակետի տվյալները, քանի որ գտնվում է ջրամբարի պատվարի տեղամասից մի փոքր ներքև:

Ելփին գետն ունի ՀՀ գետերին բնորոշ հոսքի ներտարեկան բաշխում: Գետն ունի հստակ արտահայտված գարնանային վարարումների փուլ, ձմեռային և ամառային սակավաջրության փուլ և աշնանային հորդացումների փուլ: Գարնանային վարարումներն առավելապես առաջանում են ձնհալի և անձրևների շնորհիվ, աշնանային հորդացումները կարող են լինել տեղումների արդյունքում, այն էլ կարճ՝ ոչ հստակ արտահայտությամբ: Սակավաջուր սեզոնին գետն հիմնականում սնվում է աղբյուրներից: Ելփինի ջրամբարի հատվածում տարեկան հոսքի ծավալի 80-90%-ն անցնում է գարնանային վարարումների ընթացքում:

Նախատեսվող գործունեության տարածաշրջանում գերակշռում են շականակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած հողային տիպերը: Տարածաշրջանին բնորոշ են դեյուվիալ և դեյուվիալ-պրոյուվիալ նստվածքային տիպերը՝ արտահայտված խճաքարա-խճավազային ապար կարբոնատա-կրաքարային, ավազաքարային կավավազային լցվածքներով: Հողերի էրոզվածության աստիճանը 6-րդ կարգի է՝ 70%-ից ավել: Անմիջապես գործունեության տարածքում հողային ծածկույթը հիմնականում քարքարոտ է, տեղ-տեղ գետի ափամերձ հատվածներում մուգ շականակագույն հողեր են: Ըստ նախնական հաշվարկների՝ հանվող հողագրունտի ծավալը կկազմի 0,4 մլն մ³, որն ամբողջությամբ տեղադրվելու է պատվարի մարմնում, ավելցուկայնի բնահողը կօգտագործվի ռեկուլտիվացիայի համար:

Ելփինի ջրամբարի կառուցման համար նախատեսվող տարածքն անմիջական սահմաններ ԲՀՊՏ-ների հետ չունի: Ջրամբարի շինարարության ազդեցության գոտում չկան պատմամշակութային հուշարձաններ:

Նախատեսված ջրամբարի կառուցմամբ ամբարվող ջրածավալով հնարավորություն է ընձեռնվում լուծել հետևյալ հիմնական խնդիրները

- իրականացնել Ելփին և Չիվա համայնքներում ոռոգման ջրի սակավության պատճառով անմշակ մնացած նվազագույնը 168 հա հողերի ինքնահոս ոռոգում,



- օգտագործելով գործող պոմպակայանի մղման ճնշումային խողովակաշարը՝ մեխանիկական ոռոգումը վերափոխել ինքնահոսի և խնայել տարեկան առնվազն 224.5 հազ. կՎտ-ժամ էլեկտրաէներգիա,
- բարձրացնել ներկայումս ոռոգվող 132 հա հողերի ջրաապահովվածությունը՝ ապահովելով մշակաբույսերի բերքատվության աճին:

Քանի որ ծրագրում ընդգրկված Չիվա համայնքի 50 հա հողերը և Ելփին համայնքի հողերի մոտ 10%-ը ներկայումս ոռոգվում են ինքնահոս եղանակով, ինչպես նաև Հերմոն – Ելփին ջրատարի վրա կառուցված Ելփին պոմպակայանը թողնվելու է որպես ռեզերվային: Պոմպակայանով Ելփին համայնքին մատակարարվող 90լ/վ ջուրն ուղղվելու է Ռինդ համայնքի ոռոգելի հողատարածքների ջրաապահովվածության բարձրացմանը: Նախատեսված 930 հազ. մ³ ընդհանուր ծավալով ջրամբարի կառուցումը ամբողջությամբ կապահովի մթնոլորտային տեղումների 50% և գետահոսքի ներտարեկան բաշխման 75% ապահովվածության տարիների ջրապահանջը: Սակավաջուր տարիներին Չիվա համայնքի 15հա հացահատիկի, 25հա պտղատու և 10հա խաղողի այգիներին, ինչպես նաև Ելփինի 9հա բազմամյա խոտաբույսերի հողատարածքների ոռոգումն իրականացնել նախկին եղանակով կամ անհրաժեշտ չափով դոտացիա ստանալ Ելփինի պոմպակայանից:

Նախատեսվող գործունեությունն իր ազդեցությունները կունենա շրջակա միջավայրի վրա, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ:

Շինարարության փուլում մեծ ծավալի հողային գրունտ կհանվի և կտեղափոխվի: Հողային աշխատանքներ իրականացնելիս՝ կառաջանա փոշի, որը կարող է ցրվել քամու միջոցով փորման աշխատանքների տեղամասից 100 մ տարածքի վրա: Օդի որոշակի աղտոտում տեղի կունենա նաև շինարարական նյութերի փոխադրման ընթացքում՝ մանրախճով պատված մոտեցող ճանապարհներով, բեռնատար մեքենաների տեղաշարժից: Շահագործման փուլում օդի որակի վրա ազդեցություն չի լինի:

Մեխանիզմների և տրանսպորտային միջոցների աղմուկի մակարդակը շինարարության ընթացքում էականորեն տարբերվում է և կախված է առաջացող աղմուկի տեսակից և գործունեության մակարդակից: Շահագործման փուլում աղմուկի ազդեցությունը կլինի աննշան:

Շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա (մակերևույթային/ստորերկրյա ջրեր) կլինեն հետևյալ հնարավոր ազդեցությունները՝

- Ստորգետնյա ավազանի աղտոտում՝ շինհրապարակից հոսող կեղտաջրերի միջոցով,
- Մակերևույթային ջրերի հոսքի և դրանց որակի փոփոխություններ՝ աղտոտիչների արտահոսքի պատճառով,
- Գետի ջրի որակի փոփոխություն ոչ պատշաճ կերպով պահված շինարարական նյութերի և թափոնների, կենցաղային թափոնների արտանետումների, վառելիքի արտանետումների, յուղերի և քսանյութերի արտահոսքից:

Շինարարության փուլում հողի աղտոտման պատճառ կարող են հանդիսանալ նավթամթերքի արտահոսքը, նավթամթերքի ոչ ճիշտ պահեստավորումը, նավթի և վառելիքիչեռացված թափոնները, ներառյալ օգտագործված յուղերի, հիդրավլիկ թունավոր հեղուկների, դատարկ նավթի տարրաների ոչ պատշաճ հեռացումը: Թափոնների վատ կառավարումը կարող է հանգեցնել հողի աղտոտման: Բույսերի կորուստը շինհրապարակի մաքրման հետևանքով կարող է հանգեցնել բնական միջավայրի և կենդանական աշխարհի տեսակների կորուստի:

Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակ ջրամբարի թասի տարածքում հատվելու են մոտավորապես 380ծառ: Հասցված վնասը փոխհատուցելու



նպատակով հատված ծառերի փոխարեն համայնքի կողմից տրամադրված վայրերում կիրականացվի ծառատունկ մեկը երկուսի հարաբերակցությամբ:

Ջրամբարի կառուցման շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել **բնապահպանական ազդեցությունները մեղմող հետևյալ միջոցառումները՝**

Շինարարական հրապարակում առաջացած փոշու և աղմուկի նվազեցման նպատակով նախատեսվում է՝

- շինարարական նյութերի և թափոնների տեղափոխման համար անհրաժեշտ է օգտագործել փակ կամ ծածկով բեռնատար մեքենաներ,
- հողային աշխատանքներն ըստ հնարավորության՝ կատարել փոշեռոսիչով կահավորված տեխնիկական միջոցներով և սարքավորումներով,
- տրանսպորտային միջոցները և տեխնիկան պետք է պարբերաբար ստուգել, կարգավորել և զինել համապատասխան խլացուցիչ սարքերով,
- շինարարական տարածքը և մոտեցող ճանապարհները պետք է պարբերաբար ջրվեժ պահեստավորված խիճը և տեղափոխվող հողային զանգվածները խոնավեցվեն՝ փոշին նվազեցնելու նպատակով:

Ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները շինարարության ընթացքում մեղմելու կամ կանխարգելելու վնասակար նյութերի արտահոսքը բացառելու համար նախատեսվում է՝

- փոշենստեցման համար ջրցանը կատարել ըստ անհրաժեշտության՝ հնարավորինս չառաջացնելով մակերևույթային հոսքեր,
- անձրևաջրերի և արտադրական հոսքաջրերի հեռացման և հավաքման համար նախատեսել ժամանակավոր պարզարաններ,
- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարել մոտակա մասնագիտացված կետերում,
- դեպի Ելփին գետ կեղտաջրերի արտահոսքը կանխելու նպատակով շինարարության փուլում աշխատողների համար տարածքում տեղադրել կեղտաջրերի հավաքման հոր կամ բիոզուգարան, որոնց մաքրումը կատարել համապատասխան մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Կենսաբազմազանության վրա ազդեցությունը մեղմելու նպատակով նախատեսվում է՝

- ըստ հնարավորության բացառել ծառահատումները, առկա թփերի մաքրումը կատարել մասնագետների մասնակցությամբ,
- հատված ծառերի վնասը հատուցելու նպատակով համայնքի կողմից հատկացված վայրերում կազմակերպել ծառատունկ և դրանց խնամք, տնկել մոտավոր 1300 ծառ, որի համար կպահանջվի 2,08 հա տարածք:
- Գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում՝ դադարեցնել շինարարական աշխատանքները,
- շինարարական աշխատանքներն իրականացնել ցերեկային ժամերին՝ որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար, և նվազեցնել տարածքի գիշերային լուսավորությունը՝ կենդանիների որոշ տեսակների բնականոն վարքին չխանգարելու նպատակով:
- շինարարական նպատակով առանձնացնել պահպանվող գոտիներ,
- Ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում գործունեության որոշ տեսակներ, որոնք կարող են ազդել բուսատեսակների աճման, պահպանման վրա:



Նախատեսվող շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում, ծրագրի ազդակիր տարածքում առաջացող տարբեր տեսակի թափոնները կարող են բացասաբար անրադառնալ շրջակա միջավայրի վրա՝ առաջացնելով լանդշաֆտի փոփոխություն, աղտոտել ջրային և հողային ռեսուրսները և մթնոլորտային օդը, ինչպես նաև ազդել մարդկանց առողջության վրա:

Իրականացվող ծրագրի տեղամասերում աշխատանքների մեկնարկն իրականացվելու է հնագետի հսկողությամբ: Շինարարական աշխատանքների ընթացքում որևէ անհայտ հնագիտական շերտի, անհայտ ծագման իրերի, բնության հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու են և տեղակացվելու է համապատասխան պետական մարմնին, հետագա գործողությունները ՀՀ գործող օրենսդրության համաձայն կազմակերպելու համար:

Հանվող հողային զանգվածը (բերրի հողաշերտ և գրունտ), որն առաջանալու է ջրամբարի թասի փորման ընթացքում, պահեստավորվելու է տեղում հատկացված վայրերում: Ըստ նախնական գնահատման հողագրունտային զանգվածը կկազմի 400000 մ³, հանվող բուսահողի ծավալը՝ 1500 մ³: Ջրամբարի թասից դուրս՝ պաշտպանիչ գոտում կազմակերպվելու է բերրի հողի պահեստներ՝ ծածկի տակ շրջանցող առուներով: Բերրի հողը ամբողջությամբ օգտագործվելու է տարածքի բարեկարգման և կանաչապատման նպատակով:

Հողային ռեսուրսների վրա հնարավոր ազդեցությունները և վերջինիս մեջ վտանգավոր նյութերի և քսայուղերի ներթափանցումը կանխելու նպատակով նախատեսվում է՝

- ճանապարհից դուրս տեղակայվող սարքավորումների վայրում փռել ավազ կամ մանրախիճ,
- բուն գործունեության տարածքում յուղի, վառելիքի կամ այլ վտանգավոր հեղուկների պահման տեղամասեր չնախատեսել,
- շինարարական նյութերը տեղադրել հատուկ տակդիրների վրա
- հողային գրունտը տարածքում պահպանել ծածկված վիճակում՝ անջրաթափանց թաղանթով,
- առաջացող շինադրը տեղափոխել Արենի համայնքի կողմից նախատեսված աղբավայր,
- հանվող հողային զանգվածն օգտագործել հետլիցքի և տարածքի բարեկարգման համար,
- շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարել տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում,
- շինհրապարակից դեպի գյուղամիջյան ասֆալտապատ և միջպետական Մ2 ավտոճանապարհի դուրս եկող ավտոտրանսպորտային միջոցները պարտադիր պետք է իրականացնեն անիվների լվացում:

Ռիսկերի նվազեցումը կարելի է ապահովել իրականացնելով մի շարք բնապահպանական և սոցիալական միջոցառումներ, որոնց արդյունավետության ապահովման նպատակով պետք է կազմակերպել աշխատանքների մշտադիտարկումներ:

Հաշվի առնելով նախատեսվող ջրամբարի տարածքի ռելիեֆային և բնահողային պայմանները, նախատեսվող պատվարի բարձրությունը (36մ), ինչպես նաև ձկնաբանի կողմից իրականացված ուսումնասիրությունները և տրված եզրակացությունը (որոնք առկա են գնահատման հաշվետվության մեջ,) և այն հանգամանքը՝ որ ջրամբարը նախատեսվում է կառուցել ոռոգման նպատակով, հետևաբար ջրի հորիզոնը կլինի փոփոխական ուստի նախագծող կազմակերպության կողմից հիմնավորվել է ձկնուղի լինելու անհնարիությունը:



Պատճառաբանական մաս. ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ հանրային ծանուցումը և քննարկումները կատարվել են Վայոց ձորի մարզի Արենի համայնքի Ելփին բնակավայրում: Ելփին վարչական շրջանի ղեկավարի նստավայրում, անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել գնահատման հաշվետվության լրամշակումներում: Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Ներկայացված ծավալով ջրամբարի կառուցմամբ հնարավոր կլինի ապահովել սակավ ոռոգման ջրի կայուն և արդյունավետ օգտագործում՝ խթանելով գյուղատնտեսության զարգացումը, ինչպես նաև նվազեցնելով թիրախային խմբի խոցելիությունը կլիմայական փոփոխությունների ազդեցության հանդեպ: Ջրամբարի կառուցումը հնարավորություն կտա լուծել մի շարք արմատական խնդիրներ՝

- կուտակել գետի օգտագործելի հոսքի մի մասը, կարգավորել ջրահոսքերը՝ ապահովելով բնապահպանական թողքերը:
- հրաժարվել մեխանիկական եղանակով ոռոգման ջրի մատակարարումից և 150 հա հողերի ոռոգումը փոխադրել ինքնահոս եղանակի, խնայել զգալի չափով էլեկտրատներգիա, կրճատելով շահագործման և պահպանման ծախսերը:
- բարձրացնել ներկայումս ինքնահոս եղանակով ոռոգվող 150 հա ոռոգելի հողերի ջրապահովվածությունը՝ ապահովելով կայուն ջրամատակարարում ողջ ոռոգման շրջանում:

Փորձաքննական պահանջներ

1. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:
2. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:
3. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող մնացորդային գրունտի, շինադքի և տարբեր տեսակի թափոնների հեռացումն ու տեղափոխումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:
4. Կանաչապատումն անհրաժեշտ է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական



պայմաններին բնորոշ ծառայության բուսականությամբ՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշման պահանջներին համապատասխան:

5. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:

6. Առաջնորդվել ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 20-ի «Ջրաէկո-համակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին» N 64-Ն որոշման պահանջներով:

7. Հողաբուսական շերտի (հողի բերրի շերտ) հեռացումը բացահանքի տարածքից կատարել ՀՀ կառավարության 08.09.2011թ-ի թիվ 1396-Ն և 02.11.2017թ-ի թիվ 1404-Ն որոշումների պահանջներին համապատասխան:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

Վայոց ձորի մարզի Արենի համայնքում Ելփինի ջրամբարի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝




Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝



Հովակիմ Ֆրունզիկյան